ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ ՀԱՍՑԵԱԳՐՎԱԾ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի ութերորդ մասի 12-րդ և 15-րդ կետերի պահանջները,

ելնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) հանրային պաշտպանի գրասենյակի գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու անհրաժեշտությունից,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Հաստատել «**Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակին հասցեագրված դիմումների քննարկման և որոշումների հաշվառման մասին**» կարգը:
2. Պալատի աշխատակազմի ղեկավարին հանձնարարել՝ մինչև 2014թ. փետրվարի 20-ը ապահովել կարգով նախատեսված գրանցամատյանների կազմումը:
3. Պալատի ֆինանսական տնօրենին՝ ապահովել մարզերի հանրային պաշտպաններին հեռապատճենի կամ համարժեք այլ սարքերով:
4. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը դնել Պալատի աշխատակազմի ղեկավարի վրա:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

14 **փետրվարի** 2014**թ.**
թիվ 46-**Լ**
ք.Երևան